Անկասկած, ուսումնասիրված նյութից ամենահետաքրքրականը առաջին շրջանի նյութերն են։ Դրանք որոշ չափով ներկայացնում են այն ժամանակաշրջանի Հայկական լեռնաշխարհի մշակույթը, որը մի շարք երևույթներով կապված էր իրանական աշխարհի հետ։ Այս կապը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ արևելյան Հայաստանի բնակիչների մշակույթը զարգանում էր ուրարտական տարրի լուրջ ազդեցության տակ մ. թ. ա. X—IX դդ., այսինքն դեռ Բիայնիլիի թագավորների անմիջական նվաճումներից առաջ։ Իսկ հետագայում, մ. թ. ա. VIII—VI դդ. այս ազդեցությունը դարձել է ճնշող և միակ։ Հարկ է հիշել, որ ուրարտական մշակույթը սերտորեն կապված էր նաև Աքեմենյան Պարսկաստանի մշակույթի հետ[53]։

Կասկածից վեր է, որ արևելյան Հայաստանում կենաց ծառի պատկերը առաջացել է ուրարտական կրոնի և արվեստի ազդեցության սկզբնական շրջանում, այսինքն մ. թ. ա. X—IX դդ։ Նույն ժամանակաշրջանում խեցեղենի մեջ տարածվում է միականթ սափորների նոր ձևը, որը այնքան բնորոշ է ուրարտական բրուտագործության համար։ Մ. թ. ա. X—VI դդ. արևելյան Հայաստանի տերիտորիայում ստեղծվեց և զարգացավ բարձր և ինքնուրույն քաղաքակրթություն, որը գտնվում էր ուրարտական տարրի հզոր ազդեցության տակ և սերտ կապի մեջ էր արևմտյան Իրանի մշակույթների հետ։ Այն նախադրյալներ ստեղծեց հետագայում, ուրարտական պետականության անկումից հետո, Հայաստանի մշակույթի հետագա զարգացման համար։

Դ. ԱՐԵՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Մ. թ. ա. V—II հազարամյակների Հայաստանի բնակիչների հանապազօրյա կյանքի դրվագները պատկերող վավերագրերի՝ ժայռարվեստի հուշարձանների ուսումնասիրությանը սկիզբ է դրվել երախտաշատ հնագետ Աշխարհբեկ Քալանթարի ջանքերով։ Այնուհետև մեզանում ժայռարվեստի ուսումնասիրությամբ զբաղվել է Ս. Սարգսյանը, որը ժայռանկարների բազմաթիվ խմբեր է հայտնաբերել Արագածի լանջերին և Գեղամա լեռներում։[1]

1966 թ. մեզ հաջողվեց նախնադարյան արվեստի չափազանց հարուստ նոր օջախ հայտնաբերել Սյունիքում, այժմյան Սիսիանի շրջանի Ուղտասար հնավայրում։ 1967—1968 թ., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ շարունակելով ուսումնասիրությունները, ժայռանկարների բազմաթիվ նոր խմբեր հայտնաբերեցինք Սիսիանի, Ագիզբեկովի, Եղեգնաձորի շրջանների բարձրադիր լեռնապարերի փեշերին։ Նախնական հաշվումներով Ուղտասարի և Վարդենիսի լեռնաշղթայի փեշերին, մի քանի տասնյակ կիլոմետր երկարությամբ ձգվող տարածության վրա հայտնաբերված պատկերազարդ քարերի քանակը 4000-ից ավելի է։ Բավական է ասել, որ ժայռապատկերներով ամենահարուստ Ուղտասար հնավայրինը շուրջ 2000 քար է։ Յուրաքանչյուր քարի վրա փորված է 2—50 պատկեր։ Ժայռապատկերները գրեթե 9 ամիս շարունակ ծածկված են ձյան ստվար շերտով. ուսումնասիրության համար դրանք մատչելի են միայն ամռան ամիսներին։

Հարթ, գերազանցապես սև կուպր հիշեցնող մակերեսով, ասես մոմված սլկուն ժայռաբեկորները քանդակելու համար բնական կտավ են ծառայել։ Էնդ որում, պատկերները փորվել են հորիզոնական կամ ուղղահայաց մակերեսի վրա, նայած քարի դիրքին։ Պատկերները, որոնք գուցե փորվել են քարով, գծային և ծավալային են. աննշան քանակ են կազմում կետերով վերարտադրված պատկերները։ Ժայռապատկերների փորվածքի խորությունը 2—6 մմ է, գծերի լայնությունը՝ 2—21 մմ։ Մենապատկերներով ժայռաբեկորների վրա գերակշռում է այծապատկերը։ Սյունիքի, մասնավորապես այժմյան Սիսիանի, Ագիզբեկովի, Եղեգնաձորի ժայռարվեստի հուշարձանների վրա վերարտադրված են ժամանակի կենդանական աշխարհի ներկայացուցիչների՝ բեզոարյան ուղղաեղջյուր այծի, վիթի, եղջերուի, վարազի, տուրի, ձիու, շան, գայլի, շնագայլի, հովազի, արջի, առյուծի

53 Գ. Ա. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը. «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 149—164։

1 Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, էջ 113—122, աղ. 24—29։

պատկերները։ Սակավ է հանդիպում զուրրի (րիզոն) պատկերը[2]։ Ժայռանկարներում շատ են մարդկանց, զենքերի (նետ ու աղեղ, նիզակ, վահան և այլն), որսորդական բազմատեսակ պիտույքների (պարան, օղապարան և այլն), սայլերի, ինչպես նաև տիեզերական պատկերացումների հետ կապվող պատկերները։ Խիստ վարպետորեն, բնական դիրքերում կատարված կենդանիների (մասնավորապես այծերի, տուրերի) պատկերներից կարելի է դատել, թե որքան մեծ նշանակություն է ունեցել կենդանին այդ ժամանակի մարդկանց կյանքում։ Ուղտասարի լեռնարգուկների լանջերին, ձորակներում, դարավանդներում սփռված քարաշեղջերում որձաքարի վրա դրոշմված են առավելապես բեզոարյան ուղղաեղջյուր, երբեմն էլ գայլարուն եղջյուրներով այծերի պատկերներ։ Այծի ոտքերը վերարտադրված են մեկ գծով, երբեմն էլ այծը երեք ոտքերով է, շատ հաճախ շարժման մեջ։ Առավել հետաքրքրական է այն հանգամանքը, որ այծի պատկերը հաճախ վերարտադրված է նկատելի ոճավորումով[3]։ Ուշագրավ են այծի եղջյուրներն ու պոչը մի կամարով իրար միացված պատկերները։ Քարերի վրա առատորեն վերարտադրված այծերի պատկերներում կարելի է զանազանել տարբեր տեսակի այծեր. մի դեպքում այծն ուղղաձիգ վզով է, եղջյուրներով. մի այլ դեպքում՝ ընդհանրացված ձևով, որ պատկերում է և՛ մարմինը, և՛ գլուխը։ Կոմպոզիցիոն «կտավներում» քիչ չեն այծերի հոտը պատկերող տեսարանները. հաճախ այծերը պատկերված են խոշոր եղջերավորների հետ. ժայռաբեկորներից մեկի վրա վերարտադրված է կոմպոզիցիոն հետաքրքիր պատկեր՝ իրար հետևից ընթացող կենդանիների հոտը։ Ամբողջ ժայռաբեկորի մակերեսին այդ շարքը մեծապես շեշտված է իր հաջորդական կարգով։ Հոտի շարժումը պատկերելու համար բանդակագործը այն չի պատկերել ուղիղ գծով, այլ վերարտադրել է որոշ թեքությամբ։ Այս շարքի շուրջը ժայռաբեկորի ստորին ձախ և աջակողմյան վերին մասերում կան այծերի և այլ կենդանիների պատկերներ։ Քանդակագործ-նկարիչը երբեմն նույնիսկ կենդանիների սովորություններն է վերարտադրել։ Քարե «կրտավներից» մեկում պատկերված են երկու ուշագրավ տեսարան՝ արու և էգ այծերի և երկու տուրերի հանդիպումը։ Քարի աջակողմյան մասում քանդակված է նաև մի մարդ պառկած վիճակում նետ արձակելու պահին։

Սյունիքի ժայռանկարներում հաճախ պատկերվող թեմաներից են այծի, վարազի, տուրի, եղջերուի և այլ կենդանիների որսի տեսարանները։ Որսորդները հետիոտն են, զինված նետաղեղով, նիզակով, ձվաձև և մեջտեղում փոքրինչ նեղացող, ուղղանկյունաձև վահաններով[4] ու այլ պարագաներով։ Ուղտասարի, Մուրադ սա-

2 Կենդանիների տեսակները որոշել է կենդանաբան Պ. Պ. Ղամբարյանը։

3 Տե՛ս Դ. Կարախանյան, Գ. Սաֆյան, Ժայռապատկերներ Սյունիքում, «Սովետական արվեստ», 1961, N 1, էջ 33—35։

4 Մեջտեղում փոքր ինչ նեղացող, ուղղանկյունաձև վահանների ավելի ուշ զուգահեռներ ենք գտնում I հազարամյակի սկզբի խեթական հուշարձաններում։



Ուղտասար. որսի տեսարաններ և քառանիվ սայլեր

րի ժայռապատկերներում շատ են այն տեսարանները, ուր պատկերված են լայնալիճ աղեղից արձակվող եռանկյունաձև ծայրապանակով նետեր, որոնք վերջավորվում են հակառակ դիրքով դրված փետուրներով։ Որսորդներին հաճախ ուղեկցում են որսկան շներ։ Գրեթե չկան ծպտյալ որսորդներ, որոնց այնքան հաճախ ենք հանդիպում Հայաստանում հայտնաբերված բրոնզի մշակույթի առավել ուշ հուշարձաններում, մասնավորապես բրոնզե դոտիների վրա։ Ժայռապատկերներում վերարտադրված են ինչպես խոշոր, կոլեկտիվ, այնպես էլ անհատական որսի տեսարաններ։ Հիշատակենք դրանցից միայն մի քանիսը։ Ուղտասարի ժայռաբեկորներից մեկի քանդակներն ամբողջապես պատկերում են որսի տեսարան։ Կենտրոնական մասում դտնվում է մեծածավալ արու եղջերուն, չափազանց գեղեցիկ կեցվածքով, լայնատարած եղջյուրներով։ Նրա վրա չորս կողմից հարձակվել են նիզակներով զինված որսորդները և որսորդական շունը, որը բռնել է եղջերուի պոչից։ Եղջերուի առջևում գլխիվայր պատկերված են երկու մարդ՝ ձեռքերը վերև պարզած։ Վերջիններիս գլխիվայր դիրքով պատկերելը քանդակագործի համար եղել է միջոց, որով նա թերևս կամեցել է ցույց տալ, որ նշանք զոհեր են. երևի ենթարկվել են եղջերուի հարվածներին։ Եղջերուին շրջապատող մարդիկ պատկերված են հարձակողական վիճակում, նետ ու աղեղով, նիզակով զինված։ Ժայռաբեկորի վրա

կան նաև այծերի, ալիքաձև առարկայի (գուցե պարան), ինչպես նաև արև խորհրդանշող պատկերներ։ Ուղտասարի լեռնարգուկներից մեկի ստորոտում գտնվող Կարկաո հնավայրում մեկ այլ ժայռարեկորի վրա վերարտադրված որսի տեսարանում պատկերված է քառանկյունի վահան ձախ ձեռքում բռնած մի որսորդ, որը նիզակով հովազին խոցելուց հետո հանգիստ քայլերով մոտենում է իր զոհին։ Այս կոմպոզիցիայում կա նաև թևերը պարզած մի մարդու պատկեր, գլխիվայր վիճակում, որսած այծ և մեկ այլ կենդանի. սրանց ոտքերը պայմանականորեն միացած են, որ շատ հաճախ է հանդիպում ժայռապատկերներում։ Ժայռարեկորի վերին մասում պատկերված է հովազը շարժման մեջ։ Որսի տեսարաններում ուղղաեղջյուր քարայծերից բացի, թևև սակավ, հանդիպում է նաև դալարուն եղջյուրներով այծի պատկեր. այն վերարտադրված է ավելի քան 50 պատկեր ունեցող կոմպոզիցիոն «կտավում»։ Նվազ հետաքրքրական չէ նաև որսի մեկ այլ տեսարան. քարի վերին մասում պատկերված են տուրեր լծված իրար հաջորդող երկու քառանիվ սայլեր. ստորին մասում՝ մարդ և հովազ, որը վերարտադրված է ծավալային եղանակով։ Այծերից ներքև որսորդն է, որը մի ձեռքով բռնել է նիզակը, մյուսով՝ հավանաբար վահանը, որի ուռուցիկությունը վերարտադրելու համար քանդակագործը ընտրել է պատկերման ծավալային եղանակը։ Նկարի մնացած մասերում կան պարան, օղակներ և այլ խորհրդավոր պատկերներ։ Որսորդության պահը վարպետորեն է ներկայացված նույն հնավայրի մեկ այլ հուշարձանի վրա, որտեղ քանդակված են շուն, այծ, թերևս փոքր պարան և որսորդ։ Վերջինս աջ ձեռքով բռնել է նիզակը, իսկ ձախով՝ ոլորուն երկարավուն պարանը։ Այս պիտույքներով «կտավը» ստանում է անհատական որսի պատմողական բնույթ։

Ջերմաջուր հնավայրում ժայռարեկորներից մեկի վրա քանդակված է պտղաբերության պաշտամունք իմաստավորող կենդանիների՝ այծերի զուգավորման տեսարան։ Համեմատաբար ավելի փոքր չափով վերին աջ անկյունում պատկերված է այդ քարայծերի սերմնավորման արդասիք հանդիսացող ձագը։ Այդօրինակ տեսարանի վերարտադրություն գտնում ենք նաև Մուրադ սարի ժայռարեկորներից մեկի վրա։

Սյունիքի ժայռանկարներում այծերի ոտերին, եղջյուրներին գցված պարանները, ձեռքի պարանը գցելու համար պատրաստ մարդկանց պատկերները թույլ են տալիս հանգելու այն հետևությանը, որ ժայռարվեստում օձ, վիշապ հիշեցնող պատկերները գերազանցապես պարաններ, որսորդական օղապարաններ և այլ պիտույքներ են, որոնք վկայություններ են Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի կիրառած որսորդության եղանակների մասին։

Որսի տեսարաններում հաճախ են հանդիպում եղջերուներ, որոնք գերազանցապես ներկայացված են որսորդի կողմից հետապնդվելիս։ Ժայռարեկորներից մեկի վրա կենտրոնական եղջերուի պատկերն է, որի մեջ քանդակագործը մեծ նրբանկատությամբ կարողացել է շեշտել եղջերուի մարմնի գեղեցիկ համաչափությունները և նրա կերպարի մոնումենտալությունը։ Եղջերուն պատկերված է վազքի պահին։ Եղջերուի հետին կողմում պատկերված են գիշատիչ կենդանիներ և շներ, ինչպես նաև նիզակավոր մի մարդ՝ նիզակը հարվածի նախապատրաստող շարժման վիճակում։ Քանդակագործը պատկերել է որսի տեսարանը իր բոլոր մանրամասնություններով։ Քարի վերին աջ անկյունում կա փախչող եղջերու։

1968 թ. Եղեգնաձորի, Ակիզբեկովի շրջաններում գտնված ժայռապատկերների նոր խմբերում, ինչպես նաև Սիսիանի շրջանի Ջերմաջուր հնավայրում հայտնաբերված ժայռարվեստի հուշարձանների վրա առատորեն հանդիպում են նաև վարազի որս պատկերող տեսարաններ։ Ձևի, ծավալի զգացողության լավագույն օրինակներ են վարազի պատկերները։ Ջերմաջրի ժայռարեկորներից մեկի վրա վարազը վերարտադրված է ծավալային եղանակով. պատկերված են վարազի մարմնի առանձին մասերը՝ ականջը, պոչը, որոնք չնայած լուծման խիստ ընդհանուր բնույթին, չեն վրիպել նկարչի աչքից։ Վարազը շրջապատված է այլ կենդանիներով, որոնցից հետաքրքրականը շներն են, քանդակված հարձակման պահին։ Քարի վերին ձախ անկյունում որսորդն է, ձեռքին ինչ-որ որսորդական պիտույք. թերևս նիզակը։ Ստորին մասը կրաղեցնում են այծապատկերները։ Նույն հնավայրի մեկ այլ քարի վրա, կենտրոնական մասում, պատկերված է երկար կամարաձև եղջյուրներով այծ։ Շուրջը կետեղված են եղջերավոր և գիշատիչ այլ կենդանիներ։ Կան նաև անիվների պատկերներ։ Խիստ ուշագրավ են վարազի պատկերները, որոնց համար վարպետը դիմել է քանդակման բոլորովին այլ եղանակի։ Վարազի մարմինը վերին աստիճանի ամբողջական կերպարանք ունի. քանդակագործը շեշտել է կենդանու մարմնի համաչափական առանձնահատկությունները։ Կենդանու ոտքերը խիստ տարբերվում են առհասարակ ամբողջ ժայռապատկերների նյութի մեջ հանդիպող մյուս կենդանիների երկարավուն, ճկուն, սլացիկ ոտքերից։ Միաժամանակ քանդակագործն այդ գանգվածայնության մեջ կարողացել է այնպիսի նրբանկա-



Ուղտասար. որսի տեսարաններ

տությամբ ղտնել կենդանու մարմնի առանձին մասերի բնորոշ ուրվագծերը, որ կերպարն ստացվել է չափազանց արտահայտիչ։ Ամբողջ հորինվածքում կա միայն մեկ մարդու պատկեր։ Ի տարբերություն մարդկային մյուս քանդակների այստեղ մարդը պատկերված է ծավալային. երկու կողմից փորագրվել են մարմնի ուրվագծերը, իսկ միջնամասում մարմինը մնացել է ուռուցիկ։ Սյունիքի այս նորահայտ հուշարձանները որսի տնտեսական մեծ նշանակությունը վկայող Ֆշմարտացի վավերաթղթեր են։ Ժայռաբեկորների վրա, թեև սակավ, հանդիպում ենք նաև ձիերի պատկերների, որոնք մի ավելորդ անգամ հավաստում են վաղըն-

ական ժամանակներում ձիու գոյություններ Հայկական լեռնաշխարհում։ Ուղտասար լեռան ստորոտում գտնվող քարերից մեկի վրա նժույգը ներկայացված է բավականին բարդ շարժման մեջ, ձին մարմնով ուղղված է աջ, իսկ գլուխը շրջված է ետ։ Ձիու կրծքային մասը պատկերված է երեք քառորդ, իսկ մարմինը և գլուխը՝ պրոֆիլ։ Մեկ այլ ժայռաբեկորի վրա նկարիչը թեև չի կարողացել վերարտադրել ձիերի շարժումների ճկունությունը, սակայն ընդհանուր կերպարը չափազանց բնութագրական է. պատկերված է չորս ձի, որոնցից ձախակողմյանի գլուխը քարի վրա չի պահպանվել. վնասվել է քարի մակերեսը։ Չիերից մեկի պատկերում շեշտված է արական հատկանիշը։

Հաճախ է պատահում, երբ որսի ռեալիստական տեսարաններում կենդանին վերարտադրված է նետահարված վիճակում։ Ընդ որում նետի հուժկու թռիչքը հաղորդելու համար նկարիչն այն հաճախ փորագրել է թեք, մարմնի մեջ մխրճված ձևով։ Հաճախ է հանդիպում այծի դնչից կախված որսորդական պարագա՝ կլոր վերջավորությամբ պարան։ Սյունիքի ժայռարվեստի ստեղծագործություններում դրեթե ամենուրեք թագավորում է դագանի պատկերը։

Ժայռարվեստի հուշարձաններում թեմատիկ պատկերներից ուշադրության արժանի է թերևս աոյուծի և մարդու մենամարտի տեսարանը։ Քանդակագործը կարողացել է վարպետությամբ վերարտադրել մարդու և գազանի շարժումները մենամարտի թեժ պահին։ Կենդանին և մարդը պատկերված են ծավալային եղանակով։ Ջնայած մարմնի մասերի խիստ ընդհանրացված եղանակին, մենամարտի պատկերը վերին աստիճանի արտահայտիչ է։ Գազանը պատկերված է ցատքի դիրքով, իսկ մարդը մի ձեռքով բռնել է կենդանու գլխից, մյուսով հարված է հասցնում։

Սյունյաց երկրի ժայռարվեստի, նախնադարյան որսորդական հմայության հուշարձաններում առատորեն հանդիպում են պաշտամունքային արարողությունների, ծիսական պարի (զուգապար և խմբապար) տեսարաններ։ Ուղտասարի ժայռապատկերներով հարուստ խմբերից մեկում կոմպոզիցիոն «կտավ» ներկայացնող քարերից մեկի մակերեսին վերարտադրված է տասնմեկ մարդկանց ֆիգուրներով ծիսական պարի տեսարան. մեծ հետաքրքրություն է ներկայացնում աջակողմյան մասում պատկերված մարդու քանդակը, որը կանգնած է այծի եղջյուրների վրա։ Ինչպես հայտնի է, կենդանու վրա մարդուն պատկերելը շատ բնորոշ է.ը խեթական, միտանական, ուրարտական արվեստին։ Ժայռաբեկորի մակերեսին փորված պատկերներում աչքի են գարնում մարդկանց շարժումները իրենց պարային ձևերով. ամենայն հավանականությամբ դրանք ունեցել են խիստ արտահայտված պաշտամունքային նշանակություն. գրեթե բոլոր ֆիգուրներում շեշտված են սեռական հատկանիշները։

Մեկ այլ ժայռաբեկորի վրա քանդակված է ծիսական զուգապարի տեսարան։ Քանդակների մեջ ուշադրություն են գրավում մարդկանց ոտքերի, մարմնի և ձեռքերի շարժումները։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ երկու ֆիգուրները չունեն սիմետրիկ դասավորություն, կատարված են ծավալային եղանակով. ֆիգուրներից յուրաքանչյուրը տարբեր կեցվածքով, ձեռքերը վեր պարզած, տարբեր շարժումներ է կատարում։

Ակներևաբար ծիսական բնույթ կրող պարի մի այլ տեսարանում չորս մարդկային ֆիգուրներ տեղադրված են գրեթե մեկ շարքով, ձեռքի չափազանց եռանդուն շարժումներով։ Ջնայած մարդկանց ֆիգուրների խիստ սխեմատիկ բնույթին, քանդակագործն ափսատել է տալ պարային շարժումները նաև փոքր մեծությամբ պատկերված ոտքերի միջոցով։ Մարդկանց ֆիգուրներում իրանի երկարության հաշվին խիստ խախտված են համաչափությունները։ Գլուխները պատկերված են չափազանց փոքր և պայմանական։ Միայն ձախակողմյան ֆիգուրի մեջ է, որ ակնարկված է նաև վիզը, իսկ առհասարակ նկատվում է մի օրինաչափություն՝ ձախից դեպի աջ գլուխները գնալով փոքրանում են. հավանաբար այստեղ պատկերվել են աստիճանաբար կոացող մարդիկ։ Կոմպոզիցիայում պարող մարդկանցից վերև վերարտադրված են հովազ և այլ կենդանիներ։

Ժայռանկարներում թեև մարդիկ հիմնականում մերկ են, սակայն հաճախ հանդիպում են նաև հագուստով մարդկանց պատկերներ։ «Գերեզմանաքարերից» մեկի վրա ողջ հասակով, ծավալային եղանակով պատկերված է մարդկային ֆիգուր, ձեռքերը վեր պարզած վիճակում։ Շեշտված են մատները, պարզած ձեռքերը և մարմնի ամրողջական կառուցվածքը։ Պատկերն ունի խիստ ուրվագծային բնույթ. թիկունքը բավականին լայն է, իսկ իրանը չափազանց նեղ։ Ուշադրություն է գրավում նախ մարդու վրա նշմարվող հագուստի ձևը. հատկապես տարատը, որը վերևում, կոնքերի մոտ, լայն է, ավարտվում է ծնկների մոտ և ստորին մասում բավականին նեղ է։ Ոտքերը տրված են պրոֆիլ վիճակում։

1968 թ. Սիսիանի, Եղեգնաձորի, Ագիգրեկովի շրջաններում բնդօրինակված կոմպոզիցիոն ժայռապատկերներում քանդակված արտադրական կենցաղ պատկերող տեսարանե-

Ուղտասար. գրսի տեսարաններ

բում չափազանց շատ են երկանիվ, քառանիվ սայլերի, ծածկասայլերի, սահնակների, արորի պատկերները։ Բերենք գեթ մի քանիսի նկարագրություններ։ Ողորկ մակերեսով վեմերից մեկի վրա, քարի կենտրոնական և ձախ կողմում փորագրվել են երկուական տուր լծված երկու քառանիվ սայլեր։ Սայլերը պատկերված են ամենայն մանրամասնությամբ։ Վերարտադրված են քաշանի երկու տեսակները. սայլերից մեկն ասես ունի երկու. մյուսը՝ մեկ քաշան, որը սայլին միանում է եռանկյունաձև հիմքով։ Սայլին լծված տուրերը պատկերված են երկու վիճակում. ձախակողմյան պատկերում մանգաղաձև, հզոր եղջյուրներով տուրերը վերարտադրված են ծավալային, միևնույն դիրքով, պրոֆիլ վիճակում։ Ամբողջ տեսարանը դիտվում է մի փոքր վերևից և կողքից։ Կենտրոնական քառանիվ սայլը, տուրերի դեմ-դիմաց

պատկերված դիրքը այն տպավորությունն է թողնում, թե քանդակագործը նրանց պատկերել է միայն վերևից։ Սակայն դա սոսկ տպավորություն է, որ մենք ստանում ենք տեսարանը դիտելով ժամանակակից մարդու աչքերով։ Հնադարյան քանդակագործը ցանկացել է պատկերել այնպես, որպեսզի երևան և՛ սայլը, և՛ տուրերը իրենց ողջ մանրամասնությամբ, և որպեսզի սայլի ու տուրերի պատկերներից որևէ մեկը մյուսին չխանգարի, քանդակագործը կատարել է հեռանկարչական օրենքների ավանդական դարձած մի խախտում. բոլորը պատկերված են պրոֆիլ, իսկ սայլը՝ վերևից։ Չնայած հեռանկարչական խնդիրների պայմանականությանը, պատմողական տեսակետից քանդակը դարձել է չափազանց արտահայտիչ։ Քանդակագործին հաջողվել է այդ միջոցներով վերարտադրել կենդանիների բնորոշ շարժումները լուծը կրելու պահին։ Քարի աջակողմյան և ստորին մասերում կան շան, գազանի և տուրերի ծավալային, արտահայտիչ պատկերներ։ Ուշագրավ է այն, որ այստեղ կենդանիների շարժումները աչքի են ընկնում իրենց հանգիստ և խաղաղ բնույթով։ Չափազանց հետաքրքիր են վերարտադրված սայլորդները, որոնք պատկերված են սանձապարանը ձեռքներում բռնած։ Հորինվածքներից մեկում կենտրոնական պատկերն իրենից ներկայացնում է երկու տուր լծված սայլի պատկեր, հետևում վերարտադրված է սանձերը ձեռքին մի մարդ։ Սայլի քաշանը միացված է ոչ թե առջևի, այլ ետին մասին՝ եռանկյունաձև հիմքով։ Ինչպես և նախորդ հորինվածքներում, տուրերը պատկերված են պրոֆիլ, դեմ առ դեմ։ «Կտավում» մարդը պատկերված է սխեմատիկ, սակայն քանդակագործի նպատակը եղել է վերարտադրել մարդու շարժումը սանձապարանով ղեկավարելու վիճակում։ Հորինվածքում կան այլ դժվար մեկնելի պատկերներ։ Կարելի է բերել սայլեր պատկերող և ուրիշ տեսարաններ, սակայն բավարարվենք այսքանով։ Սյունիքի IV—III հազարամյակների սայլերի նորահայտ պատկերները մեծ հետաքրքրություն են ներկայացնում և հանդիսանում են 1967 թ. Արթիկի շրջանում, Հառիճի III հազարամյակին պատկանող բնակավայրում Տ. Խաչատրյանի ջանքերով կավե արձանիկների հետ հայտնաբերված Երկանիվ սայլի կավակերտ մոդելի, Ներքին Գետաշենում (Ադիաման) և Սևանա լճի ցամաքած տարածության վրա, Լճաշենի կուրգաններում Հ. Մնացականյանի հայտնաբերած մ. թ. ա. XIV—XII դարերին վերագրվող սայլերի նախատիպերը։

Ժայռարվեստի հուշարձանների երևան գալու ժամանակը ճշգրիտ որոշելը տակավին դժվար է։ Ժայռանկարների տարիքը որոշելու դժվարին խնդրին, ինչպես նաև ոճի, թեմատիկ սյուժեների, կատարման եղանակների քննությանը անկասկած մեծ նպաստ կբերեն Սյունիքի պատկերազարդ քարերով դամբարանների պեղումները։ Ինչպես հայտնի է, Հայաստանի հնագույն պատմության այս նորահայտ հուշարձանները՝ ժայռապատկերները, փորված են գերազանցապես քարե շրջան կազմող կրոմլեխների, քառանկյունաձև, բոլորշի, ձվաձև թաղումների «գերեզմանաքարերի» մոտ, հուշարձաններ, որոնք հետաքրքրական նորություն են Հայաստանի նախնադարյան մշակույթում։ Ժամանակին պատահաբար հայտնաբերված և վերջերս միայն Սևանի ավազանում ձեռք բերված մի կավանոթ թույլ է տալիս փոքրիշատե ճիշտ սահմանելու ժայռապատկերների առանձին խմբերի ժամանակը։ 1968 թ. աշնանը Հայկական ՍՍՀ Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում հետախուզական աշխատանքների ժամանակ ձեռք բերված (Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան)՝ II հազարամյակի սկզբին վերագրվող կավանոթը կարևոր կովան է հանդիսանում Սյունիքի ժայռարվեստի հուշարձանների տարիքը ճշգրտելու համար։ 41,5 սմ բարձրություն ունեցող լայն վզով, դուրս փռվող պսակով, փոքր ինչ ձգված իրանով, հարթ հատակով կավանոթի վրա պատկերված է որսի չափազանց հետաքրքիր տեսարան։ Կավանոթի վզից քիչ ներքև շարքով, իրար հաջորդող կարապների վեց պատկերներ կան։ Երկրորդ առավել հետաքրքրական գոտին, որը նույնպես բոլորում է անոթը, վերարտադրում է իրար հետևից ընթացող թերևս շների, վիթի, էգ ե արու ուղղաեղջյուր այծերի և արու եղջերուի պատկերներ, որոնք կատարման ոճական առանձնահատկություններով հար և նման են Սյունիքի ժայռակտավներում այնքան առատորեն հանդիպող կենդանատեսակների՝ եղջերուի, այծի և թերևս շան պատկերներին։ Կավանոթի զարդապատկերների հիման վրա մենք համարձակվում ենք Սյունիքի ժայռարվեստի հուշարձանների մի զգալի մասը, «գերեզմանաքարերի» վրա փորված պատկերները համարելու մ. թ. ա. III հազարամյակի վերջերի, II հազարամյակի առաջին կեսի արվեստի ստեղծագործություններ։

Ժայռապատկերների հասակի խնդիրը բազմաթիվ օղակներում տակավին կարոտ է հնագիտական լրացուցիչ նյութի միջամտության. կասկածից վեր է, որ առաջիկայում ձեռնարկվելիք պատկերազարդ «շիրմաքարերով» դամբարանների պեղումները առարկություն չհարուցող նյութեր կընձեռեն Հայաստանի հնա-

գույն ցեղերի կենցաղը, աշխարհայացքը, դեղագիտական պատկերացումները արտացոլող ժայռապատկերների տարիքը հշգրտելու համար։ Հայկական լեռնաշխարհի նախնադարյան մշակույթի այս հուշարձանները անասնապահ ցեղերի թողած հիշատակարաններ են, որոնք փորվել են գերազանցապես իրրև որսի հաջողությունն ապահովելու հմայական բաղձանքներ։

Հայաստանի բարձրադիր մասերում ժայռարվեստի այս նորահայտ, բազմահազար հուշարձանների գյուտերը, ինչպես նաև դամբարանադաշտերն ու կացարանները պերճախոս կերպով վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի այս մասը վաղնջական ժամանակներում բնակեցված է եղել։ Զարմանք հարուցող ժայռապատկերների անսամբլների ուսումնասիրությունը միայն սկսված է. դժվար մեկնելի է պատկերներից շատերի ենթարնագիրը։ Տևական ժամանակ է պահանջվում ուշադիր ու խոր ընթերցելու Սյունիքի քարե մատյանի էջերը։ Մեր հեռավոր նախնիների երկնած հարյուրավոր հանելուկներ տակավին սպասում են իրենց լուծմանը, որը կբացահայտի նախնադարյան մարդու կյանքի, նրա պատկերացումների մանրամասնությունները։

Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ, Պ. ՍԱՖՅԱՆ

НОВЫЕ ДАННЫЕ О РАСПИСНОЙ КЕРАМИКЕ АРМЕНИИ НАЧАЛА I ТЫС. ДО Н. Э.

Расписная керамика Армении и Закавказья, особенно характерная для первой половины II тысячелетия до н. э., известная по материалам Кировакана, Кармир-берда (Тазакенд), Камо, Муханнат-тапа, Триалети, Узерлик-тепе, Кармир-ванка и ряда других памятников, сравнительно редко встречается во второй половине II и особенно в начале I тысячелетия до н. э.

Расписная керамика начала I тысячелетия до н. э. была известна из раскопок А. А. Миллера в 1926 г. в Кармир-ванке, где часть сосудов встречается в сопровождении железных предметов. Роспись этих сосудов существенно отличается от орнаментации сосудов II тысячелетия до н. э.; проявляя полный упадок орнаментальных мотивов, она принимает форму небрежного узора или же неравномерной покраски сосуда[1].

Расписные сосуды начала I тысячелетия до н. э. в Армении известны и по урартским материалам, ранние образцы которых найдены в Ване и датируются IX—VIII вв. до н. э. Все эти сосуды покрыты светлым ангобом и расписаны двумя разными тонами—коричневым и красным. Роспись наносится под венчиком или на венчике в виде геометрического орнамента[2]. Сосуды с роскошной росписью известны более позднего времени, из раскопок Кармир-блура, где найдены были прекрасные образцы расписной керамики в виде аска, сапожков, сосуда с рельефными бычьими головами, бытующими до VII—VI вв. до н. э.

Расписные сосуды начала I тысячелетия до н. э. известны также в сопредельных с Армянским нагорьем областях. Так, керамика начала I тысячелетия до н. э., известная из Малой Азии, представлена фригийскими изделиями в виде двуручных кратеров, разнообразных чайников, чаш и т. д. Известны они из Сиалка Б., также относящиеся к началу I тысячелетия до н. э.[3]

Как видим, расписная керамика начала I тысячелетия до н. э. представлена небольшим количеством изделий, поэтому обнаружение каждого нового сосуда представляет большое значение для изучения этой интересной культуры.

Работая над памятниками материальной культуры Северо-Восточной Армении, мне удалось выявить небольшую группу предметов рассматриваемого типа, происходящих из Редкин-лагеря, и другие памятники долины реки Акстев.

Среди материалов из Редкин-лагеря, хранящихся в Государственном музее Грузии, имеются два сосуда с росписью. Один из них представляет собой красный широкогорлый кувшин, с высоким расширяющимся туловом и низкой шейкой с четко выступающим венчиком. В центре тулова поме-

[1] См. Б. Б. Пиотровский. Археология Закавказья, Л., 1949, стр. 48.

[2] См. Г. А. Тирацян. О расписной керамике древней Армении, «Историко-филологический журнал АН Арм. ССР», 1965, № 3, стр. 271.

[3] См. там же, стр 270.